պելով բազմածախիւք, և ազգի ազգի երգովք և նուագարանօք զուարճացուցին զսիրտն։ Եւ զայս ամենայն պատիւ արարին նմա վասն այնր, զի ունէր Թագաւորէն Զիկմունդէն իշխանութիւն և պատուէր, զի ուր և կամիցէ երթալ և շրջել ի այս Թագաւորութիւն, հրաման լիցի նմա, և ոչ ոք ի մարդկանէ նմա բան չասիցէ։ Եւ ի գնալն ի քաղաքէն մեծաւ հանդիսիւ



Նոյն Պատկեր զարդարեալ.

ուղաւորեցին զնա. որ և գնաց ի Խոդին. զի անդ եկեալ էր և դադարեալ էր, Թողլով զերկիրն իւր և պարոնանիստ զքաղաքն իւր. վասն զի կասկած ունէր իւրոց մեծաւորաց, զի կամէին զնա սպանանել. որպէս սովորութիւն է նոցա միշտ. և նա յաղագս այնորիկ իջեալ էր ի Խոդինն։ Եւ զիւր իշ-